ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ՊՈԵՄԸ

ՍԱՐԳԻՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Գրիգոր Նարեկացին մեղանում ընկալվել է որպես բացառիկ համահայկական սրբություն, և ժողովուրդը նրա մասին հորինել է բազմաթիվ ու բազմարնույթ զրույց-հրաշապատումներ[1]: Մեր մշակույթի պատմության մեջ նա այն հանճարներից է, ում հանդեպ հետաքրքրությունը շարունակաբար մեծանում է:

Նրա «Մատյան ողբերգության» երկն անսովոր գեղարվեստական կառույց է[2], ու դեռևս առաջադրվող հարցը՝ պոե՞մ, թե՞ աղոթք[3], ենթադրում է ոչ վերջնական մի պատասխան: Գույթ երկուսը միաժամանակ, քանզի նա հեղաշրջում է նախընթաց ողջ բանաստեղծությունը՝ առաջադրելով ձևի և բովանդակության նոր կառույց, որի ուսումնասիրության համար բոլորովին նոր մոտեցումներ են պահանջվում[4]:

Մուտքն այդ բառակերտ տաճար սկսվում է զոհաբերության ծես-հանդեսով.

Զա՛յն հառաչանաց հեծութեան ողբոց սրտից աղաղակի
Քեզ վերընծայեմ, տեսողդ գաղտնեաց....
Զսպառուղ ըղձից ճենճերոյ սասանեալ մտացս՝
Բուրվառաս կամացս առաքել առ քեզ....(Ա,Ա)[5]:

Արտաքուստ անարյուն այս զոհաբերությունը չափազանց նման է արյունալիին: Այսինքն դա նույն պատարագի խորհուրդն է: Աղոթք-հաղորդությամբ բանաստեղծը մի զերագույն նպատակ է հետապնդում. թող Լյանքի գրքում գրվի իր անունը, կործանումից փրկվի իր անձը: Դրա համար անհրաժեշտ են մեծագույն ջանքեր.

Զի ամենայնիւ մահացեալ հոգիս մարմնովս մեղաց՝
Շնորհաւք քո, գթած, ի քեզ զաւրացեալ՝ քեւ նորոգեցայց,
Զատեալ ի մեղաց անմահ կենդանութեամբ (Ղ.Ե, Գ)[6]:

Դ. Ալիգերիի հերոսը բացարձակ լույսի մեջ է տեսնում «պատկերը մարդու» հասնելով գերգույի ճանաչմանը, ուր մարդ և Աստված միաձուլված են[7]: Այդ «ձուլման» մասին է գրում Գր.Նարեկացին[8]՝ Աստծու շնորհիվ

---

[1] А н. З а к а р я н. Александр Кулебякин и Армения. Ереван, 2003, с. 190.

[2] *Մ. Ա ր ե գ յ ա ն. Երկեր. հ. Գ. Երևան, 1968, էջ 583-886:*

[3] *Ժ. Ք ա լ ա ն թ ա ր յ ա ն. Գր. Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի և սաղմոսների առնչությունները. Ս. Էջմիածին, 1997, էջ 3-5: Լ. Շ ա ն թ. Երկեր. հ. 9, Պեյրութ, 1910, էջ 113:*

[4] В. М! и к у ш е в и ч. Целительный свет. Читая Нарекаци, Ереван, 1997, с. 93.

[5] *Գ ր. Ն ա ր ե կ ա ց ի. Մատեան ողբերգութեան (այսուհետև՝ Մատեան). Երևան, 1985, էջ 247:*

[6] *Նույն տեղում. էջ 640:*

[7] *Դ. Ա լ ի գ ե ր ի. Աստվածային կատակերգություն. Երևան, 1983, էջ 409:*

[8] *Վ. Զ ա լ ա յ ա ն. Հայ փիլիսոփայության պատմություն. Երևան, 1975. էջ 356:*

«անմահ կենդանութիւն» ստանալու հույսով: Աստծու էության մեջ արտացոլված է մարդը, մարդու մեջ ապրում է Աստված, քանզի նա նաև բացարձակ լույս է, կյանքի և ամենայն գոյի սկզբնապատճառ: Սա նորպլատոնական հայացքի դրսևորում է, որը աստիճանաբար, մանավանդ XI դ. սկզբում, վերաճում է Վերածնական մտածողության[9]: Բանաստեղծը կյանքին տված իր բնութագրումներից մեկով բացահայտում է ժամանակային տիրույթում մարդու և կյանքի փոխհարաբերության հարցը.

Տարր ժամանակիս՝ յանէից,
Անցեալն՝ անյայտ, եւ ապառնին՝ կարծողական,
Ես՝ անհամբեր, եւ բնութիւն՝ թերահաւատ,
Ոտք՝ անհաստատք, եւ միտք՝ ցնդեալք,
Կիրք՝ հարկաւորք, եւ բարք՝ անժուժկալք,
Մարմին՝ մեղսամակարդ, եւ յաւժարութիւն՝ երկրասէր,
....Անպատրաստ դտեալ զիս ինքեան,
Մեղքն կենդանացան՝ յանդիմանեալ յարդարութեանցն,
Եւ՝ ես մահացայ կենացն եւ կենդանացայ կորստեանն (ԾԷ, Ե)[10]:

Մեղքերի մեջ խճճված և տանջահար քնարական հերոսը աստվածասեր է, հայկական մտածողության հնատիպի շրջանակներում նոր եզերք ստեղծող: Ողբերգականությունը Մատյանում ամենևին նշան չէ հոգևոր ճղճիմության և թուլության: Ընդհակառակն, այն համլետյան մի խրոխտ մենախոսություն է, որից պարզ զգացվում է հերոսի անընկճելի կեցվածքը՝ ընդդեմ կյանքի մարտահրավերների: Իսկ կյանքը Նարեկացու և յուրաքանչյուր քրիստոնյայի համար մի փոթորկուն և հարափոփոխ ծով է:

Այսերկրային ժամանակը հոսուն է, անկանգ: Այներկրային հավերժին հասնելը տեղի կունենա պատմական ինչ-ինչ աստիճանակարգեր անցնելուց հետո.

Անպարտելի քաջութեամբ եւ անպատիր զդաստութեամբ,
Ընդ դժնեայ գոռողի մարմնոյս բռնութեան արիապէս մարտուցեալ,
Սովիմբ վանեցին զանմարմինն Բելիար
Եւ մշտամարտ հանգիսիւ յասպարիզի կենցաղոյս,
Առանց զգուանաց ծանրաբեռնութեան
Ի լայնածաւալ ծփանաց աշխարհիս ծովու,
Տապանակաւ մարմնոյս թանձրութեան
Զթեթեւութիւն հոգւոցն թռուցեալ՝
Ի նաւահանգիստն կենաց հասին (ՁԻ, Գ)[11]:

Կյանքի ալիքների միջով խռովահույզ հոգին մարմնի նավակով հասնում է կյանքի նավահանգիստը: Շարժումն այդ քառսում սկսվում է մի ինչ-որ չորոշարկված կետից՝ «ի խորոց սրտից», որտեղից հույզերը, մտքերն ու բառերն ուղղվում են առ Աստված՝ հասնում որոշարկման: Կիրառելով տատանողական շարժման համաչափ կրկնելիության սկզբունքը՝ բանաստեղծը կարողանում է քնարական պատումի տեղապտույտներին այնպիսի պարբերականություն տալ, որ դրանից առաջանում է նաև հզոր

[9] Վ. Զ ա լ ո յ ա ն. Հայկական ռենեսանս. Երևան, 1964:
[10] Գ ր. Ն ա ր ե կ ա ց ի. Մաաեան, էջ 465–466:
[11] Նույն տեղում, էջ 577–578:

հոսանք, ներքին շարժում, գլուխների մեջ անցում մեկից մյուսին: Ինսուլինհինգ գլուխներն այն հանգրվան-աստիճաններն են, որոնցով քնարական հերոսն անցնում է երկրային ոլորտից դեպի երկնայինը (Եղիշեն դա պատկերել է լուսեղեն աստիճանների ձևով): Ծովային անհայտ ու անմշակ ընգերքից, անհայտ շրջակա տարածությունից նա հասնում է աղոտ ձևեր առնող մի նոր իրականություն՝ լույսով ու երկնային ցողով թաթախված: «Աստվածաշնչում» ծովը կյանքի խորհրդանիշն է գրեթե բոլոր առումներով, իսկ ջուրը՝ այն փորձությունների ու վտանգների, որ հետապնդում են մարդուն: Մ. Մեծարենցը գրում է, թե «հոգեկան վրդով մրրիկ մըն է»[12] Գր.Նարեկացու Մատյանը: Դա միանգամայն ճիշտ է: Նրա պատկերային և նշանային համակարգում ծովը կարևոր է նաև նրանով, որ բաղում խորհրդանիշների մեջ ամենաորոշակին կյանք-ծովինն է, ինչը ևս հանդես է գալիս իբրև արարչագործ միջավայր՝ շնչավոր էակ[13]: Այդտեղ երկնային և երկրային տարրերն ու տարերքները միախառնվում են և դառնում հեշտ թափանցելի, փոխակերպելի: Դա «ազատ տեղաշարժվելու», մի վիճակից մյուսին, մի իրականությունից մյուսին անցնելու դյուրություն է ստեղծում: Իր «Եկեղեցւոյ» տաղում բանաստեղծն իր միտքը բանաձևում է այսպես.

Երկինք ի յերկիրս, և երկիրս ի յերկինք,
Վայրէջք ի խոնարհ, և վերելք ի բարձունս[14]:

Նրանք կապված են անխզելիորեն, իսկ խզումը, թեկուզ շատ կարճ ու ժամանակավոր, կբերի աղետի: Նրանց կապն ու միախառնվածությունը նման է հայելային զուգադրում-արտապատկերներին, երբ երկինքը երկրի և երկիրը երկնքի արտացոլքն է, ինչպես դա կարելի է տեսնել Հովհ. Այվազովսկու ծովանկարներում: Այստեղ է, որ պարզվում է երկու իրականությունների, երկու կառույցների մեծ և փոքր մոդելների միմյանց կրկնակը լինելը:

Քնարական հերոսը մի անսովոր պահվածք էլ ունի: Նա մշտաթռիչ մի գոյ է, որը մտքի ճախրանքով հասնում է ամենուր: Հոգու այս անսովոր աշխարհագրությունն էլ է զարմացնում, քանզի յուրաքանչյուր գրական երկի հերոս երևակայորեն է նվաճում իրականությունը կամ, որ ավելի ճիշտ է, երևակայական իրականությունը: Բայց տարօրինակն այն է նաև, որ նա (Նարեկացու քնարական հերոսը) ֆիզիկական ներկայություն է զգում ամենուր՝ իրեն համարելով նկարագրվող գոյերի մի մասը: Մտքի այդ անսովոր շարժումները (հորիզոնական և ուղղահայաց) նրան օժտում են անսահման ազատությամբ: Դրա հետ մեկտեղ՝ բնության որևէ

---

[12] Մ. Մ ե ծ ա ր ե ն ց. Նարեկացիին հետ. Երկերի լիակատար ժողովածու. Երևան, 1981, էջ 266: Հետազոտողներին շատ են գրավել Նարեկացու ստեղծած ծովապատկերները: Դրանց մերթ խորհրդապաշտական, մերթ իրական նշանակություն են տվել: (Տե՛ս Լ. Մ կ ր տ չ յ ա ն. Արդյոք Նարեկացին ծով տեսե՞լ է.– Հայոց լեզու և գրականություն (հոդվածների ժողովածու), № 7–8, Երևան, 1987, էջ 395–404):

[13] Ե. Մ ա ր գ ա ր յ ա ն. Դրվագներ Հին Հայաստանի հոգևոր մշակույթի պատմությունից. Երևան, 2001, էջ 92–93 (80–117): Հայկական հնագույն պատկերացումներում ծովը մի ամբողջ աշխարհ է, ուր հրեղեն ձիեր են ապրում, ջրահարսեր, ոգիներ, նույնիսկ ստորջրյա քաղաքներ ու շինություններ կան, ինչպես «Սասնա ծռեր» էպոսում, երբ Սասնասարը իր զենքերը հանում է ծովի հատակից (տե՛ս Սասուցի Դավիթ. Երևան, 1990, էջ 104–109):

[14] Գ ր. Ն ա ր ե կ ա ց ի. Տաղեր. Երևան, 1957, էջ 110:

երևույթ, առարկա կամ մարդկային գործունեության առանձին ոլորտ նկարագրվում է՝ թողնվելով, որպեսզի ինքնադրսևորվի մինչև վերջ: Բանաստեղծը չի միջամտում՝ չկաշկանդելու համար, այլ արձակում է բոլոր սանձերը, որպեսզի տարերքի մեջ դրանք իրենց զարգացման բարձրակետին հասնեն: Սրանով նա հնարավորություն է ստանում անսահմանի սահմանները գծելու, անտեսանելին տեսանելի, անհասանելին հասանելի, անպարագրելին սահմանազատելի դարձնելու:

Այս ճախրանքների ժամանակ նա սկսում է «նեղվել» մարմնի թանձրությունից: Կրկին սուր կերպով գիտակցում է, որ դեռևս անհնար է ազատվել ներհակություններից: Ինքը՝ որպես երկփեղկված գոյ, իր մեջ կրում է հակադիր ուժեր[15]: Նրա էության երկու կողմերը կրկնում են իրար՝ գրական և բացասական ծայրաբևեռներով, հերոս-հակահերոս գեղագիտական ընկալումով: Դրանք իրարով են փոխպայմանավորված և բխում են ծայրահեղ անհրաժեշտությունից: Կ.Յունգի կարծիքով ներհակ ուժերի անհրաժեշտության գիտակցությունն է ծնել Մեֆիստոֆելին[16]: Եթե մի կողմում դրական գերգոյն է, հզոր արարչագործ Է-ն, ապա նրա դիմաց պետք է լինի մի այլություն, որը հակակշիռ հանդիսանա և հավասարակշռություն մտցնի գոյություն ունեցող ուժերի միջև.

Ըմպանակք երկու յերկոսին ձեռին,
Մինն՝ արեամբ, եւ միւսն կաթամբ,
Երկու բուրանոցք կայծակնաւորք,
Մինն՝ խնկով, եւ միւսն՝ ճենճերիւ,
Սկաւառակք կրկին կրաւորականք համոց,
Մինն՝ քաղցու, եւ միւսն՝ գառնութեամբ,
Բաժակք զոյգ առ երկուս բերմունս,
Մինն՝ արտաւսր, եւ միւսն՝ ծծումբ....
Դրունք տեսանելեաց ներհակաց,
Մինն՝ ի լաց, եւ միւսն՝ ի վրիպումն....
Համբարձումն երկակի բազկաց,
Ոմն՝ ի հարուածս, եւ ոմն՝ ի մերժումն,
Դէմք կրկնակի կերպիւ,
Մինն՝ տխրեալ, եւ միւսն ցասուցեալ,
Կշտամբանք ընդ միոյ երկու,
Մինն՝ աստեացս, եւ միւսն՝ ապառնեացն (Լ. Գ)[17]:

Անգամ արեգակի ամբողջականությունը երկակի է՝ «Մինն՝ խաւարի, և միւսն՝ կիզման»: Լ. Մկրտչյանը Գր. Նարեկացու քնարական հերոսին համեմատում է Ֆ.Դոստոևսկու հերոսների հետ[18]: Կայծակի այն սեպը, որ մխրճվում է մարդու էության մեջ և նրան կիսում է երկու մասի, ձգվում է դեպի երկնային անհունը: Երկփեղկվածության՝ ալիքը տարածվում է բնության և ողջ տիեզերքի վրա: Քնարական հերոսի ողբերգության ակունքը այդ ներհակություններից ազատվելու անհնարինության գիտակ-

---

[15] Վ. Զ ա լ ա յ ա ն. Հայ փիլիսոփայության պատմություն, էջ 352–353:
[16] К. Г. Ю н г. Душа и миф. 1997, с. 101 – 111.
[17] Գ ր. Ն ա ր ե կ ա ց ի. Մատեան, էջ 365–366:
[18] Л. М к р т ч я н. Пусть рассказана будет..., Читая Нарекаци, с. 4.

յումն է: Աստվածայինը, լուսավորը տրված է ի սկզբանե, չարիքը պարտադրված է կյանքի կողմից: Այդ ամենը հալթահարելի է, երբ մարդը դիմում է Աստծուն: Բայց երբ մարմնի չափավոր պահանջմունքները փոխակերպվում են անզուսպ կրքերի, անհնար է դառնում կյանքի խաղաղ ընթացքը: Դրանք հեռացնում են մարդուն երկնքից և գցում նրան հակոտնյայի իշխանության տակ, պատճառ դառնում իրական և խորհրդապաշտական մահվան.

Իսկ զառիթսն մահու դիպուածս
Դժոխարմատ ծառոյս գառնութեան պտուղք՝
Ընտանիք թշնամիք, հարազատք հակառակք եւ որդիք դաւաճանողք,
.... Սիրտս նանրախորհուրդ, բերանս չարախաւս,
Ակնս յայրատատես, ականջս վրիպալուր,
.... Անձն տարադիր, աւանդ վաճառեալ,
Գազան վիրաւոր, թռչուն նետահար,
Փախստական քարավէժ, ըմբռնեցեալ վնասապարտ,
.... Արդ, այսքան վնասակարութիւնք
խարդախութեանց յաճախագունից,
Յորոց յոմանց խարեցայ իբրեւ զյիմար,
Եւ յոմանց տիրեցայ իբրեւ զտկար՝
Կամաւ մատնեալ ղիս ինքն մահու (ԾԶ, Ա)[19]*:*

Ինչպես ասվածաշնչյան, այնպես էլ մեր միջնադարյան վարդապետական դրականության մեջ տիրապետում է այն հաստատուն կարծիքը, որ հակառակությունները սանձված են ու հաշտեցված: Դրանց թույլ չի տրված մեկի՝ մյուսի ազդեցության ոլորտից դուրս դալ, այլապես կյանքը կդադարի գոյություն ունենալուց: Ի վերջո հակադրությունները մարդու մեջ ևս համադրված են: Այսպես.

Քանզի թէ եւ ի փառս ահաւորութեան սքանչելեաց մեծիդ՝
Հակառակաւքն հանդերձեցեր զկազմած մարդոյս,
Զոմն՝ ծանր, եւ զոմն՝ թեթեւ,
Զմին՝ զով, եւ զմիւսն՝ հրային,
Զի դիմադրութիւնն ի հակառակացն հարթ պահեցեալ (ՁՁ,Ա)[20]*:*

Սա արդեն հակադրամիասնության օրենքն է և որքա՜ն դեղեցիկ ձևակերպված: Իր չար դործերի պատճառով մարդը հայտնվում է սատանայի լարած թակարդում: Աստված նրան (մարդուն) տալիս է ազատ ընտրության և կամքի ազատության իրավունք: Հր. Թամրազյանի կարծիքով քնարական հերոսի ողբերդության ակունքներից մեկն էլ այն է, որ Աստված մարդուն մենակ է թողել այստեղ: Գալիս է Որդին՝ փրկելու մեղսագործ մարդկությանը և պատուհասվում նրա կողմից: Մնում է Հիսուսի ուսմունքը՝ որպես մեծագույն հույսի արտահայտություն[21]*: Իմանալով Աստծու անսահման գթասրտության և նույնիսկ անզիջում խստասրտության մասին՝ միևնույն է, մարդը չի փոխում իր վարքը: Ինչպես.*

Ոչ պակաս, քան զփարաւոն՝ զստեղծուած սրտիս իմ խստացուցի,

---

[19] Գ ր. Ն ա ր ե կ ա ց ի. Մատեան, էջ 467–469:
[20] Նույն տեղում, էջ 592:
[21] Հ ր. Թ ա մ ր ա զ յ ա ն. Հայ քննադատություն. հ. Բ, Երևան, 1985, էջ 97:

Ոչ թերի, քան զեբրայականին խուժանին կատաղութիւն՝
Ընդդէմ արարչիդ համբարձայ,
Ոչ նուաղ, քան զաստուածամարտիցն դատայ հանդէս
Եւ ոչ խորշեցայ ի յուրացութենէ ստեղծողիդ բնաւիցս:
Ըստ աւրինակի խռովութեան մրրկաց ծովու ծփեցայ,
Ոչ այնքան սարսեցի եւ պատկառեցի ի սաստկութենէ քումդ հրամանի.... (Զ, Գ)[22]:

Տիրահալած հերոսը հասկանում է, որ ինքը երբեք հնազանդ չի եղել բարձրյալին: Կյանքի ծովում՝ անմշակ միջավայրում, նա հեռանում է Աստծուց: Հենց այստեղ էլ (ալեկոծ ծովում) նա Բելիարի հետ «Մահուն մուրհակ գծեալ, եւ աւետեացն կտակ եղծեալ» (Դ, Բ): Եվ փակված են փրկության բոլոր դռները. «Սլանողին մթեր լցեալ, եւ պահողին գանձն կապտեալ» (Դ, Բ): Այս հուսալքումի և խաբվածության անհունում, երբ ստույգ է վերջնական կորստի սպառնացող վտանգը, շողում է լույսի մի թույլ ճառագայթ: Եղիշեն Վասակ Սյունու համար ասում է, որ մահվան պահին խոստովանություն չերևաց նրա շրթունքներին, և նա ճաշակեց հեղձամաղձուկ մահը[23]:

Փրկության միակ ճանապարհը նախ՝ անկեղծ հավատն է առ Աստված: Այդ գեպքում անգամ հանցապարտին ներվում է մեղքը, ինչպես «սլոռնիկն, որ ի տեառնէ գովեցաւ», և «զմաքսաւորն, որ ի բարեգործէն յիշեցաւ» (Ժ, Գ): Իր համար ցավալի է, որ մեղքի պատճառով է հակվել դեպի հավատը, ոչ թե ի սկզբանե: Ուստի տենչում է Տիրոջ հետ լինել ոչ թե պարգևներ ակնկալելով, այլ սիրո կապանքներով նրա հետ միանալու համար, ում ձեռքով կկործանվի սատանան.

Եւ ի կողահերձ, սայրասուր սլաքէ ուժգին բախմանէ,
Որով գվէրն մեծ ընկալաւ,
Իսպառ սատակեսցի սկզբնարար մահուն (ԻԸ, Ը)[24]:

Սատանայի մեծագույն հանցանքն այն չէ, որ վրիպել է (թեև դրանից է սկսվել ամեն ինչ), այլ այն, որ չի ապաշխարում: Նա հայհոյեց Տիրոջը նաև նրանով, որ անմեղների մեծ բանակը «մահու խողխողեալ» կորստի մատնեց: Նրան իշխանություն է տրված մարգու վրա, բայց նա չարիքներ է գործում՝ բնավ չապաշխարելով: Նրան բնութագրում է իբրև՝

Ընտանի դաւաճան, մերձաւոր վատնիչ,
Հարազատ սատակիչ, կցորդակից սպանող:
Առ Աստուծ ոչ գոյր դառնալ, զի ուրացեալ էր զնա....(ԾԱ, Ե)[25]
Նա կմնա գժոխքի տիրակալ, մինչև Երկրորդ գալուստ:

Նարեկացին, նկարագրելով հայկական քրիստոնեական տիեզերքը[26], նաև նկարագրում է դրախտը, որի տեղը նախանշում է Ա. Շիրակացին[27]:

---

[22] Գ ր. Ն ա ր ե կ ա ց ի. Մատեան, էջ 267:
[23] Ե ղ ի շ ե. Վարդանի և Հայոց պատերազմի մասին. Երևան, 1971, էջ 130:
[24] Գ ր. Ն ա ր ե կ ա ց ի. Մատեան, էջ 358:
[25] Նույն տեղում, էջ 449–450:
[26] Զ. Ա վ ե տ ի ս յ ա ն. Քրիստոնեական տիեզերքը Ե դարի մատենագրության մեջ, Քրիստոնեությունը և հայ գրականությունը. Երևան, 2001, էջ 40–42:
[27] Ա. Շ ի ր ա կ ա ց ի. Մատենագրություն. Երևան, 1997, էջ 119:

Պոեմի առաջին գլուխների հոռետեսական տրամադրություններն աստիճանաբար տեղի են տալիս ցնծուն տրամադրությանը[28]: Քնարական հերոսը ձգտում է դեպի սրբերն ու մարտիրոսները, սերոբեներն ու քերոբեները՝ որպես Տիրոջ առաջ բարեխոսողների: Վերջապես նա հանգում է վախճանաբանական խնդիրների արծարծմանը, դտնում, որ երկրային պատերազմը կուննա իր երկնային շարունակությունը: Նարեկացու պոեմի քնարական հերոսը լուսավոր ուժերի կողքին է ու պայքարում է հանուն մեծ ազատության.

«Ցրուեա՛ վերստին քոյինազէն հեծանաւս, աւժանդակեալ թեւաւք նշանիպ, ...ցաւագին ցոլմունս, հրախաւար կեղծաւորութեան վիշման բազմոտանի վիշապին» (ՂԲ, Զ): Ուրեմն պատերազմն ավարտվելու է «վիշապի» և նրա գործակիցների կործանմամբ: Սա քրիստոնեության կարևորագույն գաղափարական հիմնահարցերից մեկն է: Այն մի կողմից՝ արժանացել է մեծ գովեստների, մյուս կողմից՝ քննադատության՝ այն տրամաբանությամբ, թե հակադրության ծայրաբևեռները անհրաժեշտություն են և չի կարելի մեկը կամ մյուսը բացառել: Միջնադարը առանց չորս տարրերի խնդրի քննության գոյություն չունի: Մատյանի առաջին գլուխներում տիրապետում է ջրային տարերքի նկարագրությունը փոթորկուն ծով, անդնդային խորություններ: Սակայն աստիճանաբար գործունեության ոլորտը երկրից տեղափոխվում է դեպի երկինք: Միջավայրի, տրամադրության առաջադրվող փոփոխությունների հետ իրար են հաջորդում տիրապետող տարերքները: Հողին և ջրին (թանձր տարերք) հաջորդելու են գալիս օդային և հրային (թեթև) տարերքները: Ամպրոպի և կայծակի, ծիածանային դույների տիրապետումն ու նկարագրությունը ստեղծում են նոր միջավայր և հոգեբանական նոր իրավիճակ: Այստեղ ևս բանաստեղծը բացահայտում է հակադրության նոր բևեռներ: Փաստորեն մի կողմում ծանր՝ թանձր, տարերքներն են, մյուսում՝ թեթև: Երկնային ոլորտները նկարագրելիս արդեն թանձր տարերքները փոխակերպվում են իրենք ևս: Ջուրը վերածվում է անձրևի, հողը՝ երկնային տարածության, որն ավելի շուտ տեսիլք է, քան նյութական գոյ: Հակադիր տարերքները այսպիսին են. մի կողմում՝ ծանր, մյուսում՝ թեթև, մեկում սառը, մյուսում՝ ջերմ հակադրությունները: Եվ եթե տարերքներից մեկը պակասի, ապա կխախտվի մարդու ներդաշնակ կեցությունը: Իր հողեղեն էությունից քնարական հերոսը հեռանում է՝ տիրանալու համար իր էության մյուս ձևին՝ օդեղեն-ոգեղենին: Գոյավիճակների փոփոխությունը նշան է անցողիկից հավերժականի անցման: Իրականում աստիճանակարգման հերթականությունն այսպիսին է. հողի թանձրուկից ստեղծվելով՝ գոյն անցնում և փորձվում է ջրային միջավայրում՝ մշտածուփ ծով-աշխարհում, և վեր հառնելով՝ թափանցում այսերկրային կյանքում անհասանելի՝ այներկրային նոր միջավայր: Գր. Նարեկացին կոնկրետ է նկարագրում դա. «արդ, միաւորականաւս այսու ուղիղ ամբծութեամբ ի յաւանդ իսկապէս չնորհի անդրէն միւսանգամ համբարձեալ սովիմբ, ի թռիչս թեւոց լուսոյ ահա յերկինս ժամանեցից հետե-

---

[28] *Այս առիթով Պ. Խաչատրյանը նկատում է, թե երկու հոգեվիճակներն էլ բնորոշ են Գր. Նարեկացուն, և սխալ է Կ. Քիպարյանը՝ պնդելով, թե Մատյանի և Տաղերի հեղինակները տարբեր բանաստեղծներ են (Պ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Գր. Նարեկացին և հայ միջնադարը. Էջմիածին, 1996, էջ 75):*

ւեալ: Այլ քանզի յարգանդէն, յորում յղացայ՝ հոգեւոր երկամբք ծնիցեալ.... Այս մայր հոգեւոր, երկնաւոր, լուսաւոր, քան թէ երկրաւոր, չնչաւոր, մարմնաւոր, զիս գգուեաց որդի: Կաթն ստեանց սորա՝ արիւնն Քրիստոսի: Եթէ Աստուածածնին իսկ պատկեր զսոյն ոք գրեսցէ, ոչ անաւրինի» (ԼՆ, ԺԲ)[29]: *Մորը սրբացնելուց զատ նրան համեմատում է Աստվածածնի հետ՝ դա անօրինություն չհամարելով: Այստեղ մտածողության հնատիպը ակնհայտ է (մոր՝ որպես սրբի պատկերացումը, ստինքներից՝ որպես երկրի պտուղներից գինի և հյութ հոսելը և այլն):*

Արարչագործության առաջին տարրը ջուրն է, որից ծնվում է հողը[30]: *Դրա վերևում օդն է, իսկ ամենավերևում՝ հուրը: Հրեղեն տարերքը մաքրագործող է, հավերժ սուրբ՝ լույսի և ջերմության աղբյուր: Մարդն էլ իր ծնունդով նման է Աստվածորդուն, որի պատճառով նա պետք է փորձի կատարելության հասնելու ճանապարհով կրկին նմանվել նրան: Շրջանառվում է հավերժ վերադարձի գաղափարը՝ ծնվել, հեռանալ, վերադառնալ նույն ակունքը: Ուստի բանաստեղծն առաջադրում է մարդու աստվածանալու հիմնադրույթը: Մ. Մկրյանը դրում է. «Նա (Գր. Նարեկացին – Ս. Մ.) ձգտում է հասնել աստծուն և իր մարդկային բնությունը կատարելապես խառնել ու միացնել նրա էության հետ, և դեռ ավելին, նա գտնում է, որ մարդը կարող է նույնիսկ աստված լինել»*[31]: *Ոչ միայն արծարծվում է միավորվելու խնդիրը, ինչպես նորպլատոնականության արևելյան միստիկների դեպքում*[32], *այլև.*

Եւ զոր ահաւորն է ասել, կարգեմ աստանաւր,
Յիշատակ եղեալ մեծիդ երախտեաց՝ Աստուծ իսկ լինել ընտրութեամբ չնորհին
Եւ ընդ հաստողիդ միանալ՝ տէրունի մարմնոյդ ճաշակմամբ
Եւ ընդ լուսոյդ կենաց խառնութեամբ (ԾԻ, Գ)[33]:

Մարդն ստեղծված է Աստծու կողմից, բայց չնորհով կարող է նրան հավասարվել և աստվածանալ (հասկանալի է, որ այս դեպքում մարդն արարիչ լինել չի կարող): Դա Տիրոջ կողմից տրված մեծագույն բարիքն է: Այդ իսկ պատճառով նա պետք է բարեզարդի տիեզերքը, ձգտի փրկության և ոչ թե կործանի իրեն:

Օգտագործվում են նոր նշան-տարերքներ: Հրով Աստված ի չիք է դարձնում ապականյալ աշխարհը (Սոդոմ-Գոմոր): Մաքրագործող հուրը Մատյանի սիմվոլիկայում դառնում է նոր տարերք, նոր գույն. «Ընձեռեա՛ մեզ, ձեռն ամենալի, որ բանաս եւ մատուցանես պատրաստաբար բաշխմամբ ի մասունս բազմապիսիս, աւդոց քաղցրութիւն, անձրևաց չահեկանութիւն» (ՂԲ, Թ)[34]: *Ծովի խռովահույզ ջուրը փոխվում է բարեբեր անձրևի, խոնավ ու ցուրտ հողմը՝ ջերմաբեր զեփյուռի, իսկ քնարական հեբոսը հառաչանքի փոխարեն հնչեցնում է ցնծուն մեղեդի. «Սկզբնապար*

---

[29] Գ ր. Ն ա ր ե կ ա ց ի. *Մատեան, էջ 546–553:*
[30] Ծ ն ն դ ո ց, Ա., *9-10:*
[31] Մ. Մ կ ր յ ա ն. *Հայ հին գրականության պատմություն. Երևան, 1976, էջ 524:*
[32] М. Т. С т е п а н я н ц. Философские аспекты софизма. М.,1987, с. 40–41.
[33] Գ ր. Ն ա ր ե կ ա ց ի. *Մատեան, էջ 453:*
[34] *Նույն տեղում, էջ 617:*

նախընթացութեան աղէյարմար ջուրթակաց՝ բարետաւիղ ողբերգակուութեանց, բարացուցական բամբռան բառացի բարառնութեանց, սրինգ նորոգ այլ իմն տեսակաւ՝ առեալ մեզ ընդ հնոյն փոխանորդութեամբ, ո՛չ հեթանոսաւրէն ուրուաձայն հնչման եւ կամ հրէաբար խակախոհութեան» (ՂԲ, Ը)[35]: Ինքը հնչեցնում է նոր երգը ոչ հեթանոսորեն, այլ քրիստոնեաբար: Դա նոր երգն է վերափոխված, ուրախարար, աստվածալուր: Հնչեցնողը նոր մարդն է վերստին ծնվածը: Միստիկ բանաստեղծը, որ բնության մեջ տեսնում է Աստծուն և իր կապը տեսանելի բնության հետ համարում կապ արարչի հետ, հաղորդակցության պահին մի կողմ է թողնում միջնորդ սղակները և դերակատարներին: Իր Մատյանը մի կամուրջ է, որով հերոսը պիտի հասնի Աստծու մոտ, միանա նրա հետ. «Ի յայս կամուրջ ցանկալի, անխոտոր եւ անխոտորնակ եւ ի վերնաչաւիղ, բարձրաբերձ, սրբահետ սանդուղ երկնաչու առ Հայր քո աւրհնաբան.... Հոգւոյդ առաջնորդութեամբ միանալ ի քեզ անընդմիջելի» (ՂԲ, ԺԱ)[36]:

Կամուրջ-աստիճանի վրա թողնելով իր մեղքերը՝ քնարական հերոսը հասնում է երկինք: Մատյանի յուրաքանչյուր գլուխը կամրջի մեկ աստիճանն է: Հասնելով երկնքի դարպասներին՝ նա մի անհրաժեշտ արարողություն էլ է կատարում՝ օծելով մարմինը: Դա հոգու վերածնության պարտադիր նախապայման է. «սոյնպէս իւղս այս փրկութեան լուսով կատարեալ հեղեալ ի մեզ աւծանէ զարտաքին խորանս, իսկ զներքին մարդս, աներեւակ ծածկապէս մտեալ, նոր կենդանածնէ» (ՂԳ, Գ)[37]: Այստեղ լույսը Աստծո խորհրդանիշն է՝ բարձրագույն բարիքի արտահայտությունը, յուղը՝ սրբության կնիք-նշանը, մաքրագործման առարկան: Կյանքի նոր սկիզբը պետք է ամրագրել օծումով: Մաքրագործումից բացի «Ոչ է աւազան կատարեալ առանց աւծման աւժանդակութեան» (ՂԳ, ԺԴ): Օծումը սրբացման և մաքրագործման խորհրդանիշն է[38]: Այդ նաև բժշկվելու և աստվածային գթասրտությանն արժանանալու մի եզակի հնարավորություն է. «և զՀոգի անմահիդ փչման սովաւ եւ սոյն արդիւնատրեցեր. երկունք կենաց, որոյ կերպարան յառաջ եկելոյն» (ՂԳ, ԺԴ):

Բուն օծման նշանակությունը կապվում է Օծյալի՝ Հիսուս Քրիստոսի անվան հետ: Քրիստոս հունարեն Χριςτος «Օծյալ» է նշանակում[39]: «Զի որպէս ոչ է համարձակել ուրուք յերկրայնոցս աստուած անուանիլ, այլ՝ աստուածային, նոյնպէս ոչ բերէ մարմին զՔրիստոսդ անուն անձին համարել, այլ՝ զքրիստոնեայն, անտանելի նախնոյն մեծութեան մկրտչին՝ ջուրքք՝ զՀոգին հրաւիրողին. Քանզի չեմ ես, ասէ, աւծեալն, այլ առաքեալ առաջի նորա» (ՂԳ, ԺԴ)[40]: Տերն իր Ավետարանը սկսում է քարոզել Մկրտչի օծումից հետո, և նրա (Հիսուսի) անունով մյուսները քարոզում են օծվելուց հետո: Օծումը պարտադիր է թե՛ հոգևոր, թե՛ աշխարհիկ ա-

---

[35] Նույն տեղում, էջ 616:

[36] Նույն տեղում, էջ 618:

[37] Նույն տեղում, էջ 621:

[38] Ըստ Գր. Նարեկացու, ինչպես ճարպի մեջ սուզված պատրույգը՝ հրով այրվելով (ինքն օծված լինելով) լույս է արձակում, այնպես էլ «աւծութիւն լուսոյ առ ի մեզ հեղեալ, ի հանդերձեալսն ջահաւորի» (ՂԳ, ԺԷ):

[39] Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի. հ. 2, Երևան, 1981 (արտատպ. Վենետիկ, 1837), էջ 1025:

[40] Գ ր. Ն ա ր ե կ ա ց ի. Մատեան, էջ 629:

ոաջնորդների համար: Իսկ դա մի կողմից մաքրագործվելու, մյուս կողմից՝ վերափոխվելու (վերածնվելու) խորհուրդն ունի իր մեջ: Օծվելով Հիսուսը հաստատվեց իր աստվածային գերի մեջ (Ս. Հոգին առնելով), մնացյալները ձեռք են բերում աստվածեղեն (սուրբ) հատկանիշներ:

Չլինելով նյութի փոխակերպություն, այլ հենց ինքը՝ ամենայն ինչի սկիզբը, նա հայտնվեց աշխարհում, որ լուսավորի բոլորին, փոքրի ու անօգնականի համար առավել օգտակար լինի, որպեսզի տնանկը չկարոտի, և «ընչեղն բարձրամտեսցի», որպեսզի լույսը և խավարը հավասարապես տարածվեն: Ոչ թե Տիրոջ նմանությունը Քրիստոսի մարմնով աշխարհ եկավ, այլ հենց ինքն իր մարմնով: Պարգևած չնորհներից ևս մեկը լրացվեց: Խնդրելով Քրիստոսից՝ վրկել իրեն «յերկիւղէ գիշերի», ցանկանում է, որ ամաչի սատանան, և պակասեն «զէնքն սայրասուրք»: Իր «մահացեալ հոգին» էլ.

Զատեալ ի մեղաց անմահ կենդանութեամբ՝

Ի յարութեանն արդարոց, Հաւր քում աւրհնեցեալ» (ՂԵ, Գ)[41]*:*

Անմահության ձգտող Մատյանի քնարական հերոսը նշում է դրան հասնելու ճշգրիտ ուղին: Իսկ Աստված-հրեշտակներ-երկնային մարմիններ՝ կատարյալից անկատարն իջնող և հակառակը՝ անկատարից կատարյալը դնացող աստիճանակարգը մարմնավորող Բ. Բոլոնիացու բաժանումը Ս. Զաքարյանը նույն կերպ է ընդունում[42]*:*

Ամբողջացնելով մեր ասելիքը՝ նկատենք, որ Գր. Նարեկացու մտահոգության ակունքներն այսօր էլ նույնքան վտանգավոր են, իսկ ազնիվ ձգտումները՝ նույնքան արդիական: Նրա տեսիլները որքան էլ խորքային-գեղարվեստական միջոցներ[43]*, նույնքան էլ մեծ երազանքներ ու արդարության հավերժական ձգտումներ են: Բնավ պատահական չէր Կ.Յունգի այն զգուշացումը, թե «նախորդ դարաշրջանները (մարդիկ – Ս. Մ.) չէին չափազանցնում՝ ասելով, թե հոգին չի ազատվել դեմոնիզմից, իսկ մարդկությունը, զարգացնելով գիտությունը և տեխնիկան, իրեն մոտեցնում է վտանգավոր մոլեգնությանը (աշխարհի կործանմանը – Ս. Մ.)»*[44]*: Այստեղ է, որ կրկին կարևորվում է անցյալի մեծերի դերը մեր կյանքում: Գր. Նարեկացին մեծ բարոյագետ-մարգարան է: Իր Մատյանով նա կարողանում է հասնել մարդու ճանաչողության մի անհասանելի բարձր աստիճանի: Դա բանաստեղծի անսահման սիրո և մարդասիրության դրսևորումն է՝ կատարված մարդու համար և ուղղված առ Աստված: Քրիստոսն արյունալի, Գր.Նարեկացին անարյուն զոհաբերությամբ փորձում են փրկել մարդուն կործանարար վտանգներից, ֆիզիկական և բարոյական աղետներից:*

Իսկ «Մատեան ողբերգության» պոեմը մի անմահ ստեղծագործություն է՝ բոլոր ժամանակներն իր մեջ պարփակող, բոլոր ժամանակների մեջ պարփակված:

---

[41] *Նույն տեղում, էջ 640–641:*

[42] *Ս. Զ ա ք ա ր յ ա ն. Մարդու հիմնահարցը XIII–XV դդ. հայ փիլիսոփայության մեջ. Երևան,1999, էջ 55:*

[43] *Հ ր. Հ. Թ ա մ ր ա զ յ ա ն. Նարեկյան դպրոցը. Երևան, 1999, էջ 156–164:*

[44] К. Г. Ю н г. Указ. раб., с. 286.

ПОЭМА ГРИГОРА НАРЕКАЦИ "КНИГА СКОРБНЫХ ПЕСНОПЕНИЙ"

САРКИС МХИТАРЯН

Р е з ю м а

Статья посвящена выявлению некоторых художественных особенностей поэмы гениального поэта X в. Григора Нарекаци "Книга скорбных песнопений". Особое внимание обращается на то, что поэт создает внутренний сюжет развития лирической поэмы. Во взаимоотношениях земля и небо, душа и тело обсуждены основные аспекты их первостепенности и второстепенности и оценена роль книги в поэзии армянского средневековья.

GRIGOR NAREKATSI'S POEM "BOOK OF LAMENTATIONS"

SARGIS MKHITARYAN

S u m m a r y

The present article is devoted to the illumination of some fictional peculiarities of the 10th century celebrated poet Grigor Narekatsi's "Book of Lamentations". It is especially important to mention that the poet creates the plot's development of lyrical poem. Primary and secondary characteristics in the interrelation between heaven and the earth, spirit and body are discussed and the role of the book is evaluated in the scope of the Armenian medieval poetry.